«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 17§7_____ «___29____» ____01_____ 2022թ.

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա տնօրենության նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել փոխտնօրեն Մ. Օթարյանի և Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

I. 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առկա ուսուցման բակալավրիատի ուսումնական պարապմունքներն սկսել ս/թ փետրվարի 8-ից և ավարտել ս/թ հունիսի 4-ին:
2. Հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել ս/թ մարտի 1-ից և ավարտել՝

ա) բակալավրիատի ավարտական կուրսերում՝ ս/թ ապրիլի 2-ին,

բ) բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ ապրիլի 9-ին:

3. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել՝ ա) բակալավրիատի առկա ուսուցման ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ մայիսի 31-ից մինչև հունիսի 4-ը,

բ) բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ մայիսի 24-ից մինչև 27-ը,

գ) բակալավրիատի հեռակա ուսուցման ավարտական կուրսերում՝ ս/թ ապրիլի 12-ից մինչև ապրիլի 16-ը:

4. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առկա ուսուցման բակալավրիատի քննաշրջանն անցկացնել ս/թ հունիսի 7-ից մինչև 25-ը ժամանակահատվածում:
5. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման քննաշրջանն անցկացնել.

ա)) բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ մայիսի 31-ից մինչև հունիսի 25-ը,

բ) բակալավրիատի հեռակա ուսուցման ավարտական կուրսերում՝ ս/թ ապրիլի 19-ից մինչև 23-ը ժամանակահատվածում:

6. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ): Ամսական վճարման պարագայում առաջին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել երկու ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

7. ***Պարտքերի մարում սահմանել՝***

ա) առաջին լուծարքային շրջան՝ ս/թ օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 6-ը (հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի համար ս/թ ապրիլի 26-ից մինչև 30-ը),

բ) երկրորդ լուծարքային շրջան՝ ս/թ սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 22-ը (առկա ուսուցման ս/թ ապրիլի 20-ից մինչև 23-ը, բակալավրիատի հեռակա ուսուցման ավարտական կուրսերի համար ս/թ մայիսի 3-ից մինչև մայիսի 7-ը):

8. Առկա ուսուցման 2022թ. բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել ս/թ մայիսի 3-ից մինչև 27-ը ժամանակահատվածում, իսկ մանկավարժի լրացուցիչ որակավորման համար՝ մինչև ս/թ հունիսի 10-ը:

9. Հեռակա ուսուցման բակալավրիատի 2022թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել ս/թ հունիսի 1-ից մինչև 25-ը ժամանակահատվածում:

10. Պրակտիկան սկսվելուց 15 օր առաջ մասնաճյուղի ՄԿՊԿ բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների վերաբերյալ զեկուցագրերն (ԱԿԻԱ բաժնով) ու ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի տեղաբաշխած ուսանողների ցուցակները: Պրակտիկաների ավարտից հետո 20-օրյա ժամկետում ներկայացնել հաշվետվությունները:

11. Ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքների հանձնման ակտ) ՈՒՄՎ ներկայացնել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

12. Աշխատողի՝ որևէ պատճառով բացակայելու դեպքում փոխարինող այլ աշխատողի ներգրավելու մասին զեկուցագիրը մասնաճյուղի տնօրենին ներկայացնել բացակայող աշխատողի փոխարինման անհրաժեշտություն առաջանալու պահից առավելագույնը եռօրյա ժամկետում:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>ՀՈՒՆՎԱՐ</u>

- Մինչև ս/թ հունվարի 21-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2021-2022 ուսումնական տարվա առաջին քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը (ԱԿԻԱ բաժնով):
- Ս/թ հունվարի 25-ից մինչև հունվարի 31-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման համար դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև հունվարի 31-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Մինչև հունվարի 31-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման շրջանավարտների անձնագրային տվյալները (երեք լեզվով)՝ դիպլոմների լրացման համար:

ՓԵՏՐՎԱՐ

- Ս/թ փետրվարի 1-ից մինչև 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ փետրվարի 2-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և հաշվետվության 34 ձևը:
- Մինչև ս/թ փետրվարի 3-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ս/թ փետրվարի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերի փաթեթները:
- Մինչև ս/թ փետրվարի 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) մագիստրատուրայի հեռակա ուսուցման շրջանավարտների վերաբերյալ զեկուցագիրը:
- Մինչև ս/թ փետրվարի 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (ըստ սահմանված ձևի՝ ձև 10):
- Մինչև ս/թ փետրվարի 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը (ըստ 4-րդ ձևի):
- Մինչև ս/թ փետրվարի 16-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքների արդյունքների վերաբերյալ թվային տվյալները (ըստ սահմանված ձևի):
- Մինչև ս/թ փետրվարի 18-ը «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները:
- Մինչև ս/թ փետրվարի 19-ը ապահովել համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվող բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլանով նախատեսված յուրաքանչյուր դասընթացի պատշաճ ներկայացվածությունը e-learning հարթակում (դասընթացի պլան, գրականության ցանկ, անհրաժեշտ էլեկտրոնային նյութեր):
- Մինչև ս/թ փետրվարի 22-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել գերազանցության դիպլոմի հավակնող բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման 2022թ. շրջանավարտների թիվը:
- Մինչև ս/թ փետրվարի 22-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցմամբ վերականգնված ուսանողների վերակնքված պայմանագրերը:
- Մինչև ս/թ փետրվարի 26-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և հրամանագրված ղեկավարների տվյալները:
- **ՄԱՐՏ**
- Մինչև ս/թ մարտի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Մինչև ս/թ մարտի 2-ը «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել առկա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժա-մանակացույցները:
- Մինչև ս/թ մարտի 2-ը ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալներն ըստ սահմանված ձևի (հաշվետվություն ձև 34):

- Մինչև ս/թ մարտի 3-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:
- Մինչև ս/թ մարտի 3-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն ըստ սահմանված ձևի:
- Մինչև ս/թ մարտի 4-ը դիպլոմների լրացման համար ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտների անձնագրային տվյալները (երեք լեզվով):
- Մինչև ս/թ մարտի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը (դիմումների ընդունումը կազմակերպվում է փետրվարի 8-ից):
- Մինչև մարտի 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում հեռակա ուսուցմամբ վերականգնված ուսանողների վերակնքված պայմանագրերը:
- Մինչև ս/թ մարտի 11-ը «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:
- Մինչև ս/թ մարտի 11-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ, սահմանված ձևով «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել բակալավրիատի առկա ուսուցման 2022-2026թթ. և հեռակա ուսուցման 2022-2027թթ., մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2022թ. սկիզբ առնող ուսումնական պլանները:
- Մինչև ս/թ մարտի 17-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքների արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները (ըստ սահմանված ձևի):
- Մինչև ս/թ մարտի 18-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի 2022թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների տվյալները:
- Մինչև ս/թ մարտի 25-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը (դիմումների ընդունումը կազմակերպվում է մարտի 1-ից):
- Մինչև ս/թ մարտի 25-ը ՈՒԳԿՎ բաժին (ԱԿԻԱ բաժնով) ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ս/թ մարտի 25-ը ՈՒԳԿՎ բաժին (ԱԿԻԱ բաժնով) ներկայացնել 2022թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի (այդ թվում մանկավարժի լրացուցիչ որակավորման համար) վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ս/թ մարտի 31-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների փաստացի թիվը:

<u>ԱՊՐԻԼ</u>

- Մինչև ս/թ ապրիլի 1-ը SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

- Մինչև ս/թ ապրիլի 1-ը SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման բակալավրիատի ոչ ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը:
- Մինչև ս/թ ապրիլի 1-ը ՄԿՊԿ բաժին ներկայացնել 2022-2023 ուսումնական տարվա համար նախատեսված պրակտիկաների ծրագրերը:
- Մինչև ս/թ ապրիլի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2022-2023 ուսումնական տարվա կամընտրական դասընթացներին ցուցակագրված ուսանողների թիվն՝ ըստ առարկաների:
- Մինչև ս/թ ապրիլի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն ըստ սահմանված ձևի:
- Մինչև ս/թ ապրիլի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ հեռակա ուսուցման ավարտական կուրսերի շրջանավարտների շրջանում 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Ս/թ ապրիլի 5-ից մինչև 12-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները (ԱԿԻԱ բաժնով)՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման ան-դորրագրով:
- Մինչև ս/թ ապրիլի 7-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ, սահմանված ձևով «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային ուսումնական պլանները:
- Մինչև ս/թ ապրիլի 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2022թ. ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը: Հանձնաժողովների նիստերը կազմակերպել ամփոփիչ ատեստավորման վերջին օրվան հաջորդող օրը, որից հետո մեկ օրվա ընթացքում ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել շրջանավարտների ավարտման վերաբերյալ զեկուցագրերը (ԱԿԻԱ բաժնով): Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները ներկայացնել վերջին քննությունից հետո հինգ օրվա ընթացքում (ըստ 4-րդ ձևի):
- Մինչև ս/թ ապրիլի 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մանկավարժի լրացուցիչ որակավորում ստացող ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի:
- Մինչև ս/թ ապրիլի 8-ը մասնաճյուղի փոխտնօրենին ներկայացնել 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը): ***Պատվերի և պահեստից ստանալու համար ներկայացնել մեկ զեկուցագիր:***
- Մինչև ս/թ ապրիլի 8-ը մասնաճյուղի փոխտնօրենին ներկայացնել 2022-2023 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակը՝ նշելով տեսակները (փոքր, միջին, մեծ): ***Պատվերի և պահեստից ստանալու համար ներկայացնել մեկ զեկուցագիր:***
- Ս/թ ապրիլի 12-ից մինչև 16-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ ապրիլի 15-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ս/թ ապրիլի 27-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ (հաշվետվություն ձև 34):

ՄԱՅԻՍ

- Մինչև ս/թ մայիսի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով:
- Մինչև ս/թ մայիսի 11-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն ըստ սահմանված ձևի:
- Մինչև ս/թ մայիսի 13-ը «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցները:
- Մինչև ս/թ մայիսի 20-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ամբիոնային և դասախոսների անհատական բեռնվածությունները:
- Մինչև ս/թ մայիսի 25-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների շրջանում 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:

ՀՈՒՆԻՍ

- Ս/թ հունիսի 1-ից մինչև 10-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) առկա (հեռակա) ուսուցման հինգերորդ (յոթերորդ) կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի համար դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ (համաձայն ընթացակարգի 2.11-րդ կետի):
- Մինչև ս/թ հունիսի 3-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն առկա ուսուցման 2022թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):
- Մինչև ս/թ հունիսի 3-ը մասնաճյուղի կայքում տեղադրել 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի նյութերը:
- Մինչև ս/թ հունիսի 9-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկված կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ քաղվածքները (Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներին համապատասխան):
- Ս/թ հունիսի 10-ից մինչև 20-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա (հեռակա) ուսուցման հինգերորդ (յոթերորդ) կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը (նախատեսված ընթացակարգի 2.11-րդ կետով):
- Ս/թ հունիսի 21-ից մինչև 30-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման համար դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով, իսկ ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը՝ մինչև հուլիսի 6-ը:
- Մինչև ս/թ հունիսի 25-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն՝ կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):
- Մինչև ս/թ հունիսի 29-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալներ ըստ սահմանված ձևի (հաշվետվություն ձև 34):

ՀՈՒԼԻՍ

- Մինչև ս/թ հուլիսի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն հեռակա ուսուցման 2022թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):
- Մինչև ս/թ հուլիսի 8-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) առկա և հեռակա ուսուցման ուսանողների կուրսից կուրս փոխադրման վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ս/թ հուլիսի 8-ը մասնաճյուղի կայքում տեղադրել 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի նյութերը:
- Մինչև ս/թ հուլիսի 15-ը «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել առկա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները:
- Մինչև ս/թ հուլիսի 15-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքների քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև օգոստոսի 31-ը «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները (բացառությամբ առաջին կուրսերի):

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**